# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«09» հոկտեմբերի 2020 թվական N 166-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑԻ N 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ»-Ի ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ 60,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Զանան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մանե Մկրտչյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2020 թվականի սեպտեմբերի 04-ին N 12492 թվագրությամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2017651 վկայական) Գյումրի քաղաքի Վարպետաց փողոցի N 101 հասցեում գտնվող «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան»-ի նկուղային հարկի 60,6 (վաթսուն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը՝ 1 (մեկ) տարի ժամկետով, վարձակալության հիմունքներով տրամադրել «Զանան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մշակութային միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպման նպատակով:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված անշարժ գույքի վարձակալության շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ-10251911 հաշվետվությունը, տարածքի վարձակալության ամսական վարձավճար սահմանել 59 000 (հիսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Հ. Կարապետյան ____________

Տ. Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ______________

Լ.Սանոյան ______________

Վ. Եդիգարյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Գ. Սարգսյան ______________

Տ. Փանոսյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Ա. Մխիթարյան ______________

Ա.Աղանյան ______________

Հ. Եղիազարյան ______________

Լ. Բարսեղյան ______________

Ա.Վարդանյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ. Մաթևոսյան ______________

Ա. Ղարաղազարյան ______________

Հ.Պողոսյան ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«09» հոկտեմբերի 2020 թվական**